Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 198 — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 29 ՕԳՈՍՏՈՍ 1884 — (Ն. Տ.) 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ — 19 ՁԻԼԴԱՏԷ 1301

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԳԱՅՄԱՆՔ

Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 զուրուշ։ երկու անգամի համար զ զուրուշ է։ աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կը լլլայ։

Որագրոյց վճարելու նամակ կամ որևիցէ գրութիւն պէտք է ուղղել

«Առ խմբագրութիւն ԱՐՆԻՒԼՔ օրագրի»

ԹՄԲԱԳՐԱՏՈՒՆ։ Ղալաթիա, Նորատունկեան խան։

Իսկ գաւառներէն հետեւեալ հասցէին

{ كلوءرا } درعليه ده غلطه ده خانده نوراد ونكيان

غزتهسى اداره

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ	Համար	Տարեկան	դահեկան	արծաթ.....200
»	»	Վեցամսեայ	»	» 100
»	»	Եռամսեայ	»	» 50
»	»	Հատով	»	» 1
Գաւառաց	Համար	Տարեկան	»	» 240
»	»	Վեցամսեայ	»	» 120
»	»	Եռամսեայ	»	» 60
Օտար	Տարեկան		Ֆրանք	 59
»	»	Վեցամսեայ	»	 28

Դուրս [illegible] ծախքը խմբագրութեան վրայ է։

40 ՓԱՐԱ

Կ. ՊՈԼԻՍ

ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 29 ՕԳՈՍՏՈՍ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶԵՂՈՒՄՈՒ ՄԸ

Նոյնատարածք էր բաւական բան թողուլ իւր ետեւ, դարձեալ և դարձեալ կը տեսնէք և կը լսէք որ Նորին քարոզիչ կամ անոր եղբարքն ի Քրիստոս՝ Հայկազեան Բառագրքին մէջ գովեստի ու գրգռուատեաց բառեր չեն թողուր, թէեւ մեռեալք շատ անկարեւոր տեղ մը բռնած լինին հայ ընկերութեան կամ ընդհանուր Թուրքիոյ մէջ։ Յայնժամ ամենայն տրտունջեամբ կը պարտաւորիք համոզում գոյացնել թէ, քարոզիչք ոմանք հարուստներու մահն առիթ բրած են պերճախօսութեան ցոյց մ'ընելու, և դրամական լաւ փոխարինութիւն մը ստանալու։ Եւ այս սակարկութիւնը միայն իրենց և հանգուցելոյն ժառանգորդաց միջեւ կատարել բաւ չհամարելով, հարիւրաւոր միամիտ ունկնդիրներ ալ կը դատապարտեն վկայ լինելու, անհամ դամբանականներ լսելու, ճանձրանալու, և անգամ մ'ալ դամբանական մտիկ չընել որոշելու։ Կը համոզուիք եկեղեցական այս նոր զեղծման, և կը գայթակղիք բնականապէս։

Հասարակութեան մէջ դեռ կը խօսուի յոյժ վասյուն դամբանականի մը վրայ, զոր բարձրաստիճան եկեղեցական մը մօտերս արտասանեց մայրաքաղաքիս արուարձանաց միոյն եկեղեցւոյն մէջ։ այնպէսի անձի մը դագաղին վրայ, որ իրրեւ հայ անհատ Ազգին բնաւ օգտակար չլինելէ զատ, իբրեւ հասարակ անդամ մարդկային ընկերութեան՝ չէր փայլած շատ բարեգործ կամ առաքինի կեանքով մը, և որ առաւելն է, իւր մէկ ապօրէն ամուսնութեան միեւնոյն եկեղեցւոյ մէջ բանադրուած էր երբեմն։ Ամեն օք կը հարցուցէք թէ հանգուցեալն իւր որ ձիրքերով կրցած է այս ատիճան շահիլ դերապատիւ քարոզչին զմայլումն, և չդանելով՝ և է արժանիք որով հանգուցեալն ի կենդանութեան կարենար այդչափ հպատաւոր դաղափար մը ներշնչել։ Դերապատուութեան, ամեն որ սրամտիր է բարեմտորէն հետեւցնելու թէ յետ մահուան հնչուն փաստեր գտնուած են, որք սրբազան առենարանին մտաց մէջ գէթ վայրկենական համոզում մը գոյացուցած են հանգուցելոյն ինչ ինչ ոսկեղէն ձրից ու հանդամանաց վրայ, զորս հետեւապէս չէ վարանած գովաբանել ոսկեղծեալ պերճախօսութեամբ մը, և թէ յանցանքը Ն. Դերապատուութեան չէ ամենեւին՝ եթէ այսպիսի պերճախօսութիւն մը, քսակէ մը բըխած, չէ դպած բնաւ ունկնդրաց սրտին, այլ առաւելապէս յուզած է անոնց ստամոքսն, ուր վայրկենական խանգարում մը պատճառած է։

Բայց արդեօք դիտե՞ն քարոզիչ հարք թէ, կարգ մը մեռելոց յուղարկաւորութիւնն առիթ ընելով այսպիսի պերճախօսական շահատակութեանց, յորս Ազգին կամ եկեղեցւոյն շահերէն բոլորովին տարբեր շահեր ունին ի նկատի, բարոյական և եկեղեցական օրէնքի ծանր անպատեհութեանց պատճառ կը լլնին։ Այդ տեսակ դամբարանականներ կամ ազդեցութիւն կընան ունենալ դրդող վրայ, կամ ոչ։ Եթէ ազդեցութիւն կընան, օրապիսի խեղճ դաղափար մը կուտան այն արժանեաց վրայ զորս մարդ մը պատի ունենալ և այն ծառայութեանց վրայ զորս մարդ մը պէտք է մատուցած լինել, որպէս զի յետ մահուան վայելէ այսպիսի հրապարակային գովեստներ ի եկեղեցւոյ սրբազան բեմէն։ Այդ չափազանցեալ դամբանականք միթէ չե՞ն եղծեր հանրային բարոյականք, կարծեցնելով թէ մարդ ոսկւով միայն կարող է ոչ միայն ի կենդանութեան այլ նաեւ յետ մահուան դրուատիլ, թէ եւ բնաւ բարիք բրած չլինի իւր նմանեաց և այն ընկերութեան յորում ապրեցաւ։ Պէ՞տք է միթէ խաբել այսպէս միամիտ ժողովուրդն, և Մամնայի վերայ հասարակութեան օրէ օր աւելցող հաւատքը զօրացնել՝ ցոյց տալով թէ նա կրնայ տիրել նոյն իսկ եկեղեցւոյ մը բեմին։ Միթէ կրերին լաւագոյն կարծուած անդամներէն կրնա՞յ սպասուիլ որ ազգին մէջ նիւթապաշտական գաղափարաց տարածման այսպէս դաղափարի մը լինին։ Բայց եթէ իրենց դամբանականներ չեն կրնար ազդեցութիւն ընել, և այս չարիքներէն ոչ մին կրնան ունենալ որովհետեւ սրբազան բեմասացներք չեն կրնար հաւատացող դանել իրենց դրուատական բանից, գիտե՞ն արդեօք թէ, անոնք որչեն հաւատար ի նչ խեղճ դաղափար կ'ունենան կղերային բարոյականի վրայ, երբ կը տեսնեն թէ այդ մարմնոյ նչանաւորագոյն անդամներն իսկ քանի մը ոսկւոյ կամ անձնական բարեկամութեան փոխարէն կրնան ժամերով վարձու տալ իրենց բերանն և այն բեմ՝ ուր Աստուծոյ խօսքը միայն քարոզել կոչուած են, և ոչ թէ ասոր ու անոր գովաբանութիւնը ընելու նիւթական և աշխարհային նկատումներով։ Պէ՞տք է միթէ այս նոր և ցաւալի փաստն ևս ընծայել հասարակութեան թէ, հայ կղերն իւր կատարած արարքներոյ մէջ չատ անգամ չդիտեր դնուած նկատումներէ վերբարձրանալ, և իւր ճշմարիտ կոչման հմտապատասխան դեր մը կատարել։ Այս դամբանականներու զեղծումը տարակոյս չունիք թէ ցաւ պիտի պատճառէ ամեն բարեխիղճ եկեղեցականի ալ։ Բայց կը տեսնենք որ այդ զեղծում երթալով կանի։ Բաւական չէր որ քանի մը ոսկւոյ փոխարէն հասարակ աղդային մը թաղուէր Պէզճեանի մը բով։ Աւելի յաճախ կը տեսնենք որ մեռնող ամեն ազդային, որչափ ալ հասարակ կեանք մը վարած լինի, բաւական է որ քիչ մը դրամ ունենայ, Պէզճեանի մը դագաղին վրայ դուցէ չարտասանուած դովեստներ կը լսէ յեկեղեցւոջ, հաւատացեալց խուռն բազմութեան մը առջեւ, ի խորին վիշտ ամեն ողջամիտ Հայու, որ կը բաղձայ հայ կղերն աւելի բարձր տեսնել և եկեղեցւոյ բեմն՝ աւելի սուրբ և նուիրական։ Թուանք որ այս քանի մը դիտողութիւնք պիտի նպաստեն մեղմացնելու քարոզիչ հարց եռանդն, երբ կոչուին քանի մը խօսք ըսել մեռելոց վրայ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ Ի ՌՈՒՍԻԱ

Բ.

Վարժապետանոցներու նկատմամբ այս ընթացքը բռնելէ յետոյ, Նախարարութիւնը քանի մը տարի չդպաւ Նախակրթարաններուն։ Բայց 1874ին Կառավարութիւնը խորհեցաւ թէ յեղափոխական սերմերուն տղայական մտաց մէջ մուտն արդիւելով, կրնար ընդմիշտ ընել Ոչնչականութիւնն, և անոնք ազատիւրն իսկ ցամքեցնել։ Այս դաղափար յառաջ եկաւ այն յայտնութեան վրայ թէ ուսուցիչներէն ոմանք յեղափոխական կուսակցութեան դաղափարներ են եղեր։ Ընդհանրապէս, այս յեղափոխականք, դործաւոր դասերը բաւագոյնս շահելու համար իրենց դատին, հասարակ բանուորի դեր կը ստանձնեն և չինուածոց ու արհեստից մէջ կ'աշխատին, որպէս սրմիաղիր, ատաղձագործ, դարբին են։ Բանի չափ յեղափոխականներ ալ գիւղային դպրոցաց վարժապետներ եղան, դիւղացւոց մէջ ծաւալելու համար իրենց դաղափարներ, և ոչ թէ Ոչնչական վարդապետութիւններ աւանդելու համար փոքրիկ տղայոց, որք այրբենարանի դժուարութեանց դէմ կը մաքառին դեռ, կամ չորս գործողութիւններու դաղտնեաց վերահասու լինել կ'աշխատին։ Բայց այդ յայտնութիւն բաւական եղաւ Կայսրութեան 25,000 դպրոցներն ամբողջովին ոստիկանութեան հսկողութեան ներքեւ դնելու, և Կառավարութեան թերադրեց 1874ի հռչակաւոր Կանոնադիրը։ Այն Կանոնադրոյ տրամադրութիւններն և հետեւանքներ Բերդապարիի լրագրի մէջ հետեւեալ կերպիւ նկարագրած է 1880 Նոյեմբերի մէջ, Դարդոյ կոմսին առաջամանակեայ պաշտօնաթեղթին քիչ յետոյ, երբ ռուս լրագիրք կարճատեւ թարգմանութիւն մ'ունեցան ճշմարտութիւնք գրելու առանց խափանման կամ բանտարկութեան երկիւղի։ Ռուս թերթ կ'ըսէր։—

«Դարդոյ կոմսը, գաւառաց մէջ Ընկերվարութեան ծաւալումէն զարհուրելով, ջանաց գտնել այս նշանաւոր երեւոյթի պատճառն, և այն եզրակացութեան եկաւ թէ նախակրթարանք աղբիւր են ամենայն չարեաց, և թէ վարժապետք ամենէն աշարտու ծառայիչներն են յեղափոխական դաղափարաց։ Ուստի, հանրային կրթութեան Նախարարը, փոխանակ ոյժ տալու հաստատման և բարդաւաճման այնպիսի դպրոցներու յորս ժողովրդային հոգ դաստն առաջորէն ստանան ճիշդ դիտելիք՝ և ուղիղ սկզբունք, սկսաւ ամեն հնարաւոր արդելք յարուցանել ընդդէմ այդ մեծ գործի։ Դեռ նոր հաստատուած ժողովրդային դպրոցները փորձեց պաշտպանել վճռական ազդեցութեանց դէմ, այնպիսի միջոցներով որք աւելի կը պատնէն քան կը դարմանեն։ Դարդոյ կոմսին կարծեօք, մեր դիւղային վարժապետք, ըստ մեծի մասի ազգատ, տգէտ և անվարժ, (դի 1871ին էր որ թոյլ տրուեցաւ վարժապետանոցներու բացման,) Պետութեան թշնամիներն են, և վտանգ մ'են ընկերութեան, ուստի հարկ է 36 զոյգ աչքերով չարունակ հսկել անոնց վրայ։ Փոխանակ իրենց պարտականութեանց մասին հրահանգուելու, արձակեալ չարագործաց պէս ոստիկանական հսկողութիւն կը կրեն։ Փոխանակ բարոյական աջակցութիւն ստանալու կառավարութենէն, սպառնալեաց ներքեւ կը հեծեն։ դիտեն թէ քիչ մը կորով կամ անկախութիւն ցոյց տալով, իբրեւ քաղաքական հերետիկոս կոչուած պիտի հրաւէրեն իրենց վրայ, և թշուառութեան մէջ կ'անցուցեն իրենց կեանք, այն դիտակցութեամբ թէ ամեն վայրկեան կրնան օրինաց հիրաններուն մէջ իյնալ այնպիսի յանցանաց համար զորս չեն դործած։

«Այս խեղճ վարժապետներու պէս ահարկու թշնամեաց դիմակալելու համար, յայտնի է թէ ընդհանուր ոստիկանութենէն և Երրորդ Ճիւղ կոչուած կայսերական խմբին անցնելուն կ'սպասէք՝ վերջապէս իւր հետ խօսելու համար։

Տեսաւ որ հեռացած էր, բայց մի անգամուն տեսաւ իւր աղջիկն որ Թոլ պիարի ետեւէն կը վազէր՝ առանց շաղեկոտրին ճանրէն դուրս ելնելու։

Ցոսաւին քան երկվայրկեան և տղան պիտի լսոյիսէր։

Քան բոլոր հեռի էր Քամպրբմէրէն, և շաղեկոտրին ալ երեսուն մէթրոյ միայն մնացած էր աքծանին թոլ հասնելու։

Երկաթեայ ճիւղը կը վազէր կուդար մոլեգին, ծուխ ժայթքելով, դեւանը դղրդելով, և փոքրիկ աղջիկը չէր լսեր անոր գալը, վասն զի հիւսիսային ռուռն հով մը կը վչէր դեմացի կողմէն։

Այն հասակին մէջ տղայք անխորհուրդ լինելով, խեղճ տղեկը մոռցած էր հօրը պատուէրն։

Ասկէ զատ, ոսկիները թափող օտարականին եռանէն հանելու մտայն մոռացիր էր։

Անոր եռեւէն վազած միջոցին՝ անդադար կը ծռէր ճանրուն վրայ ցրուած լուսերը ժողվելու համար, և ետին չէր դառնար բնաւ։

Աղատում չունէր։

Եթէ նշմարէր իսկ խարանչագեղ հրեշտակը, զոր իւր մեքենայն պիտի ջախջախէր, մեքենավարը ժամանակ չունէր սանձերը սեղմելու և շղեկոտրին կեցնելու։

Մէկ մարդ մը կրնար տակաւին փրկել Մարիայի կեանքն, և այն մարդն էր Բիէր Քամպրբմէր։

Եթէ աբծանն այն կերպիւ շարժէր որ կառախումբը բաց ճանրուն վրայ գար, իւր աղջիկը կրսուած էր։

Բայց իւր ձեռքն էր կառախումբն ուրիշ երկաթգիծերու վրայ քշել, և յայտնի է թէ ինչպէս Մարթա։

Միայն թէ, ոճիր պիտի գործէր, վասն զի կառախումբ՝ ճանրէն խոտորելով՝ արդելքներու պիտի հանդիպէր, և անոնց զարնուելով խորտակէր։

Իւր զաւակն ազատելու համար, Քամպրբմէր հարիւր հոգի անխուսափելի մահուան պիտի մատներ։

Դիտեր զայս։ Եւ չէր կրար լռեցնել իւր խիղճն որ կը գոչէր իրեն։ Եթէ ընես զայդ, ոճրագործ մը պիտի լինիս։

Բայց նմանապէս թողուլ որ Չախջախէր տղեկն, սպանութիւն մ'էր, և ի՞նչ սպանութիւն։

Իւր սիրելի դստեր փոքրիկ մարմինն արդէն Քամպրբմէր կը տեսնէր ջարդակտոր եղած, արիւնուռչտ խարշած մի պէս, մազերը կը անկուէին գլխուն վրայ և ձեռքը լծակին վրայ կը ծանրանար ակամայ։

Եթէ քիչ մ'աւելի կոխէր, կառախումբն երկաթգիծերը փոխելով կ'անցնէր՝ առանց իւր զաւակին դպչելու։

Հազիւ տասն երկվայրկեան կը մնար իւր զաւակին և ուղիղաց կեանքին միջեւ ընտրութիւն ընելու։

Եւ իւր հայրական սիրոյն զոհելիք կառախումբին մէջ ոչ միայն անձնութիւններ կային, այլ և ընկերներ։

Զեռուցիչն իւր բարեկամներէն մին էր, և անտարակոյս պիտի սպանուէր, վասն զի արկած մը պատահած ժամանակ առաջին բախիւնը շոգեդործին կը կրէ։

(Շարունակի)

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

)(26)(

ՇՈՐԴԻՒՆԷ ՅԻՒ ՊՈՒԱԳՈՊԷ

ՊԱՐՈՆ ԼԸԲՈՒԻ ԾԵՐՈՒԹԻՒՆԸ

ՄԱՍՈՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՐՈՆ ԼԸՊՈՒԻ ԻՆՔԶԻՒՆՔ ԿԸ ՍԱՌԿԷ

Ե.

Անոնք, որ առաջին սատիճանի կառքիմ'անկեանը ծուլարար կրթնած, շոգեդործին զորութեամբ արշաւասոյր կ'անցնին այդ մարդուն առջեւէն, չեն խորհիր բնաւ թէ իրենց վրկութիւնն անկէ կախում ունի, և միայն իսկ չեն հասկնար անոր կատարած դործողութեան կարեւորութիւնն։

Եթէ կ'ուզէք հասկնալ, Արիմոեան կայարանին Բլաս ոը Լէօրօք հրապարակին կամուրջին վրայէն նայեցէք։

Անհուն կիթառի մը կը նմանի, որոյ թելերն են երկաթգիծերն, և բոյթերն են իւրաքանչիւր ճիւղակցութեանց նշանաձողերը։

Կառախումբ կ'երթեւեկեն ամեն կողմ։

Կարծես թէ ոստայնանի գործիքին վրայ երթեւեկող կկոցներ են։

Այդ կառախումբոց իւրաքանչիւրը, թէ՛ չուտ և թէ՛ ժամանէ, կանխաւ որոշուած ուղեւոյ մը պիտի հետեւի, և յաճախ այն ուղիէն զատ ուրիշ ազատ ուղի չկայ։

Եթէ չոգիին կոյր ուժէն քաշուելով դէպ ուղիղ երթայ, ուրիշ կառախմբի մ'ընդհարելով կը ջախջախի, վասն զի մեքենավարը կարող չէ ընդհարման առաջն առնուլ։

Առ առաւելն՝ անոր թարը կը մեղմայնէ՝ կառախմբին ընթացքն յամրացընելով։

Կառավար մ'է որ կրնայ կեցնել իւր ձին, բայց չկրնար ընթացքը փոխել։

Բարեբաղդաբար աքծանոյն հան է, դիտե՞ կառուցոյն երթալիք ուղին, և անմիջապ ձեռքով մ'այն ճանրան մէջ կը մղէ՝ լծակ մը ճնշելով, որ երկու երկաթգիծերու շարժուն ճիւղերը կը մեռեցնէ կամ կը հեռացնէ։

Եթէ սխալի, վայրկենական, երկվայրկենական մոռացում ունենայ, կառախումբն և մեջը դտնուողներն անդարձաբար կորսուած են։

Բիէր Քամպրբմէր չէր սխալեր, չէր մոռնար երբէք։

Լռասէր մարդ մ'էր, ինք իւր վրայ ամփոփուած, մանաւանդ իւր կնոջ մեռնելէն ի վեր, և անմատոյց այն անպարկեշտ հրապոյրներէն, յորոց երբեմն կ'ընկճէին իւր ընկերներն։

Դինեասէր ալ հրապոյր չունէր անոր համար, որչափ ուրիշ տեսակ զբաւութիւնք։

Այս պատճառաւ երբէք մտադրութիւն չունէր իւր պաշտօնը կատարած ժամանակ։

Իւր աղջիկը միայն կրնար մտադրութիւն տալ իրեն, վասն զի անգամ անոր վրայ կը խորհէր։ բայց աղջիկը քաղաքացի էր և իւր քովէն չէր զատուեր։

Այս ալ բարեբաղդութիւն մ'էր, վասն զի օր մը որ տղան հարբուխ լինելով տունը կեցած էր, հայրը սրատանջութենէն գրեթէ կը կորսնցնէր խելքն, և իրրեւ չնորհ կը խնդրեր որ ուրիշ մէկը դնեն իւր տեղ։

Եթէ խնդրած հրամանը չհանէր, թերեւս ձգէր երթար իւր պաշտօնատեղիէն։

Դառ Աստուծոյ, այն օրն ուր Պ. Թոյպիաք գինքը տեսնելու եկաւ, Քամպրբմէր մոահոգութեան պատճառ մը չունէր, վասն զի աղջիկն յոյժ քաղաքացի և զուարթ էր։

Վարժուհին ելեր՝ իւր նախասենեակը կը ըեբեր իրեն։ Ինքն ալ ուրախ կը լինի՝ խորհելով որ ժամ վեցին իւր դործէն ազատելով՝ զայն իւր փոքրիկ բնակարանը պիտի տանէր։

Այս հանապազօրեայ վերադարձն յաղթական ընթացքի մը կը նմանէր։ Օրիթալի պողոտային վրայ, խանութպանք դուրս կ'ելնէին դանդրահեր մանկիկին վրայ, աքանչանալու համար, և Քամպրբմէր ալ մեծ աշխատութիւն կը կրեր թող չտալու համար որ քաքաներով ու շաքարներով խնդրէին զայն։

Բայց այս միջոցիս անոր վրայ չէր խորհեր։

16 թիւ կառախումբը կը մնայէր, որ սրարշաւ կուգար, և արծանէն հարիւր մեթրոյ միայն հեռի էր։

Սկուառանն իւր տեղն էր, մեքենավարը տեսած էր զայն, և անոր վստահելով՝ համարձակ կուգար։

Բիէր, լծակն առնելու դիմելով, թողեր էր իւր աղջիկն և այն օտարականն՝ որ այնպէս անպատեհ ժամանակ եկեր տեղեկութիւններ կը հարցնէր իրեն։

Ցրուն համար վանարու պատճառ չունէր, վասն զի վարժուած էր ընդունելու, և կառախմբոյ երթեւեկութեան ժամերուն քաղաքացի էր։

Ասկէ զատ ինքն ալ արդէն իմացուցած էր թէ կառախումբ մը կը մտնէ։

Եթէ խնդրած հրամանը չհանէր, թերեւս ձգէր երթար իւր պաշտօնատեղիէն։

Դառ Աստուծոյ, այն օրն ուր Պ. Թոյպիաք գինքը տեսնելու եկաւ, Քամպրբմէր մոահոգութեան պատճառ մը չունէր, վասն զի աղջիկն յոյժ քաղաքացի և զուարթ էր։

Վարժուհին ելեր՝ իւր նախասենեակը կը բեր

տուցանել ուզեն, և ա՛յնպիսի կերպիւ որ բացարձակապէս անհնար է գտնուում տալ այնչափ զանազան պահանջումներու և տարբեր ճաշակներու։»

Հետեւեալ հատուած կ'երեւի 1880 ին կազմուած Բ՝ենիլ Ցանձնաժողովոյ մը տեղեկագրին մէջ.

«Քաղաքական տարրն որ վերջերս խանգարեց մեր գաւառային կեանք, պատճառեաւ որ կարգ մը անձինք ու հասարակութիւնք խառնուեցան գարոցային գործոց, և անոնց միջամտութիւն բնաւ չունենցան լաւագոյնք։ Վարժարանք պարտաւորեալ են հսկողութիւն կրել ո՛չ միայն վերատեսուչներու ամբոխի մը կողմէ՝ սիրեալ Ազգասէրութեան Մարքէնէն ցկեանն քահանայ դիւղի, այլ նաև ոստիկաններու, գիւղային պահնորդներու, և տեղական ատարապետներու կողմէ։ Այսչափ տեղանց միջամտութենէն ներելով, վարժապետն անկարող կը մնի կատարել իւր պարտքեր. գլուխը կը կորուսանէ, և քիչ մը հանգիստ գտնելու համար, յաճախ կը պարտաւորի հրաժարիլ ասպարէզէն։»

Ցաւալի եղելութիւն մ'է որ լաւագոյն վարժապետք յուռեղոյն վարձանք կը տեսնեն կառավարութեան կողմէ։ Վարժապետ մը ո՛րչափ խելացի, բարեկիրթ և իւր պարտականութեանց անձնուէր լինի, այնչափ ուելի կասկածանաց առարկայ կը մնի իւր վերաբերեալ կողմէ, և ոստիկանութեան դործակալի մի կողմէ կ'ամբաստանուի որպէս գրգռիչ և ապականիչ մանկութեան։ Բայց եթէ, ընդհակառակն, ագէտ և անկարող, գիսեմ և վայրայած ոմն լինի, իրեն դէմ երբեք չբուիր թէ գայլ մ'է ոչխարազգեստ, կամ ծպտեալ յեղափոխական մը։ Այժմեան կանոնագրոյ հետեւանքն է ուրեմն գպրոցներէն արտաքսել ամենէն ձեռնհաս ուսուցիչներն, —իրողութիւն մը զոր քաջ հասկցած են ամեն Զեմպլէյք։ Զայս հրապարակաւ յայտարարեց Նովիորոմի Դպրոցային Խորհուրդն, որ պաշտօնական տեղեկագրով մը զարմանք կը յայտներ թէ փոքր ի չատէ կարող ուսուցիչներ կրնային գտնուիլ՝ իրենց վրայ դրուած ծանր պայմաններն ընդունելու պատրաստ, և թէ կարելի եղած էր ձեռք բերել արդէն տեսնուած յոյժ հանճար արդիւնքներն իսկ։ զի վերջապէս, 80 միլիոն ժողովրդի մը մէջ ունենալ մէկ միլիոն տարբ, յորոց շատեր յոյժ թեթի կրթութիւն մը կառնուն, չի ցուցներ առաջադիմական վիճակ մը, որուն համար Ռուսիա պարծենալու իրաւունք ունենայ։

Դպրոցաց դէմ այսպիսի ահարկու հակդրութիւն մ'ևս այս ամենայն խառնութիւնք ի գործ կը դրուին որովհետեւ 25,000 վարժապետաց մէջ 20–30 լեզուփոխանակներ գտնուեր են։ Մեծ տերութիւն մը արդեօք պատճառ ունի՞ լրջօրէն երկիւղ կրելու քանի մը տասնեակ անձանց յեղափոխականներու գործողութենէն, որք ցաւեալ են իւր երկրի ահաւոր տարածութեան վրայ։ Բայց յայտնի է Ոչնչական ութիւնը պատրուակ միայն եղած է ժողովրդական կրթութիւնը սեղմելու համար։ զի կրթական այս յետադէմ ուղղութիւն ի գործ դրուիլ սկսաւ յեղափոխական դաղափարաց ծաւալման երկիւղները դեռ ծագում չառած։

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

—o—

ԵԳԻՊՏՈՍ. Մանչեսթր Օրիէնթալ իւր երեկի թուով սա հեռագրերը կը տպէ. Լոնտոն, 5 սեպտ. Տեյլի Թելեկրաֆ հեռագիր մը ստացած է Վիէննայէ, ծանուցանող թէ Եգիպտոսի անգլիական Բարձր Քոմիսէր Լորտ Նորթբրուք յոյժ սիրալիր տեսակցութիւն մ'ունենցաւ Աւստրիոյ արտաքին գործոց նախարար Քալնոքի կոմսին հետ, որ ապահովեց թէ Աւստրիա բնաւ դժուարութիւն չպիտի յարուցանէ Անգլիոյ ի մասին Եգիպտոսի։—Լոնտոն, 6 սեպտ. Աս Տէյլի Թելեկրաֆ ուղղեալ հեռագրոյ մը նայելով, Քարթիի կոմսը Լորտ Նորթբրուքի հետ տեսակցութեան միջոցին յայտարարեր է թէ Աւստրիա կը ցաւի որ Ալեքսանդրիոյ ոմբահրձման արկածելոց հատուցումները կը յետաձգուին։ բայց Անգլիոյ վրայ ճնշում բանեցնելու նպատակն ունեցող գործողութեան մը չպիտի մասնակցի Աւստրիա։

ՍԵՐԲԻՈՍ. Վիէննա, 4 սեպտ. Միլան թաղաւորն Աւստրիոյ Կայսեր հիւրն է այս պահուս։

ՁԱՐՆ Ի ԲՈԼՈՆԻԱ. Զարին ուղեւորութիւնը շարժման մէջ կը դնէ բոլոր Ազնչական մասնախմբերը։ Դուաեր կը նիրհիին Զարն սպասելու։ Ալեքսանդր Բ. Կայսեր դէմ սպասնութեան փորձին հանրածանօթ Հարդման ազնչականը Լոնտոն հասած է, ուր Միջազգային Յեղափոխական Ժողով մը պիտի դումարի, Անիխանականաց, Ազնչականաց և Հասարակրդի անդամոց բոլոր դպրոցներն ի մի ձուլելու և զանոնք այժմեան ընկերային կազմակերպութեան դէմ ընդհանուր շարժման մը մղելու համար։

ԱՄՈՒՍՏԵՒԼՈՒՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսայի ամուսնալուծեանց նոր օրէնքին դէմ Հռոմայ Պապն հանդիսաւոր բողոք մը պիտի ուղղէ Հանրապետական կառավարութեան։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՐԵՑ ԿԱՅՍԵՐԱՑ. Ռուսիոյ գինուորական լրագրն ի Պերլին, Տոլ կորուքի իշխանն, որ սեպտ. 3ի երեկոյն Վարշաւա երթալու համար ճանապարհ կ'ելնէր, ընդունեցաւ Վիլհէլմ Կայսեր կողմէ։ Բուլէոդէր Ֆրէսբուրգէյ կիսմանոյ Բեզրոդսբուրգի թէ Ֆրանց Եաւկի և Վիլհէլմ Կայսերը Վարշաւա պիտի երթան Զարին հետ տեսակցելու, ուսի կ'ընկերանայ Պ. Կրոս։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն. Ս. Պատրիարք Հայոց երեկ գիշեր դարձեալ անհանգիստ էր և տագնապի մէջ, սակայն ա՛չ այնչափ ծանր, որչափ էր նախընթաց գիշերները։

Մայրաքաղաքիս Ազգային գեսպան Վսեմ. լորտ Տրֆիրին այս առաւօտ թարգմանը ղրկած էր Օրթագիւղ Ամեն. Ս. Պատրիարք Հօր բնակարանը, նորին բարձր Սրբազնութեան որպիսութիւնն իմանալու համար։

Կը լսեմք թէ Ղալաթիոյ Թաղական խորհուրդը նկատելով որ Կալուածոց Հոգաբարձութենէ ունեցած 120 ոսկւոյ պահանջը չվճարուիր, այսօր պատճառաբանեալ հրաժարական մատուցեր է Վարչութեան, և Խորհրդարանը փակեր ու բանալին դրեր է։

Ազգային Վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովներն այսօր խառն նիստ կունենան Ղալաթիոյ խորհրդարանի մէջ։

Կեդրոնական վարժարանի խնդիրն ալ պիտի յուզուի այսօր դարձեալ։ Ուսումնական խորհրդոյ անդամք ներկայանալով Խառն ժողովոյ՝ 1882ի Յունուարի ժողովոյ տեղեկագրոյն վրայ իրենց ունեցած դիտողութիւնները պիտի մատուցանեն։ Կը լսեմք, թէ Ուսումնական խորհուրդն 17ի չափ դիտողութիւններ ունի. սակայն կարելի պիտի լինի համաձայնութիւն դոյացնել և վարժարանին բացման գործը դիւրացնել։ Խորհրդոյն դիտողութեանց կորդէն են՝ վարժարանին համար չէ թէ հոգաբարձութիւն այլ տեսուչ մ'ի կարդել, և այս տեսչութիւնն անկախ չընել։

Երուսաղիմայ պարտուց խնդրոյն համար՝ Ազգային Երեսփոխան ան և վարչական Խառն ժողովներէն կարգեալ յանձնաժողովն այսօր նիստ կը դնեն Ղալաթիոյ խորհրդարանի մէջ. գաւառներէն հանգանակելի նպաստներ բաշխման ու հաւաքման եղանակին վերաբերեալ համաձայնութիւն գոյացնելու և տեղեկագրելու համար, ինչպէս յանձնարարեց Խառն ժողովը նախորդ նիստին մէջ։

Հանոյ բոլոր քանաց քարոզիչ պատուելի Սարգիս Տէվիրեան՝ որ մայրաքաղաք եկած է քանի մ'օրէ հետէ, Ամերիկա կուգեւորի ատուածաբանական ուսման համար։ Պատուելի Սարգիսալ կը հաստատէ Հանոյ բռնի ամուսնութեան ծանր դէպքին վրայ լրագրոյս հրատարակած տեղեկութիւններն, յայտ ելլով թէ երբ իւրք ժողովրդանին մէջ կատեսնուսէր, օրիորդն բռնութեամբ դուրս հանուեցաւ անտի, ուր ապաստանեալ էր։

Կը լսեմք, թէ օրիորդ Նարկիսի հայրը մայրաքաղաքս պիտի գայ, բողոքելու և դատ պահանջելու համար։

Մարրի դիւղի Թաղական խորհուրդը կը ծանուցանէ մեզ, ինչպէս գիւղին Արծրունեան երիտասարդ վարժարանաց թատերական ներկայացումմ մը պիտի տուի յաւաջիկայ կիւրակի երեկոյ, սեպ. 2, Սագըզ–Ագաճ, Արօրլու թատրոնին մէջ։ Ցաւալի է որ գիւղին պատուարժան ազգայինք պիտի փութան քաջալերել այսչափ բարենպատակ հանդէսը։

Ազգային ժողովոյ Ի. Դպ. Նիստն տեղի պիտի ունենայ ամսոյս 31ին Ուրբաթ օրն ի Ս. Լուսաւորիչ Եկեղեցի Ղալաթիոյ։

Առեանը պիտի բացուի առաւօտեան ժամ. 2ին և գոցուի 5ին։

Հրաւիրեալ են Ազգային Երեսփոխանք իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալ։

Մ'նամ ազօթարար

Ի դիմաց Ս. Պատրիարք Հօր

Փոխանորդ Նորին

29 Օգոստոս 1884

ՕՐԱԿԱՐԳ.

Ա. Առեանական գործողութիւնք.

Բ. Շարունակութիւն վիճաբանութեան ի վերայ Առաջնորդական խնդրոյ։

Դ. Խնդիր երեսփոխանութեան Թաղէոս էֆէնտի Պէկեանի։

Առեանդպիր

ՅՈՒՍԱՆՆԷՍ ԱՐԵԱՆՈ ԵՒ

ԱՐԵՒԵԼՔ

Ամեն. Ս. Պատրիարք Հայոց երեկ գիշեր դարձեալ անհանգիստ էր և տագնապի մէջ, սակայն ա՛չ այնչափ ծանր, որչափ էր նախընթաց գիշերները։

Մայրաքաղաքիս Ազգային գեսպան Վսեմ. լորտ Տրֆիրին այս առաւօտ թարգմանը ղրկած էր Օրթագիւղ Ամեն. Ս. Պատրիարք Հօր բնակարանը, նորին բարձր Սրբազնութեան որպիսութիւնն իմանալու համար։

Ի դիմաց Թաղ. խորհ. Փոխ–քարտ.

Ամենապիր Ամենապետ

Դ. Մկրտչեան Ն. Ֆրէնչեան

1884 Օգոստ. 27

Փոխ–քարտ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իտալիոյ երկրորդ ասպետն տարեցու՝ Էվգաֆի ընդհանուր հաստատիչ անօրէն Իսմայիլ Հաղգը էֆէնտի.

Մի-թէ մարդի ասպիսն տարեցու՝ Ֆիտուէի օսմանեան հիւպատոս Տիմիթրաքի Մավրոկէնի էֆէնտի.

Վիէննայի օսմանեան գեսպանատան առաջին քարտուղար Նարի պէյ՝ այն գեսպանութեան խորհրդական կարգեցաւ.

Երկրորդ ասպետն Մէճիտիէ պատուանշան՝ Էվգաֆի վարչական ժողովոյ նախագահ Ալի Բիզա, և զինուորական գործարանաց վերակացու Ապուլլահ էֆէնտիներու.

Երրորդ ասպետն Օսմանիէ՝ Էվգաֆի ընդհանուր համարակալութեան տնօրէն Ճանիպ պէյի.

Երրորդ ասպետն Մէճիտիէ՝ յիշեալ պաշտօնատան Մէրթուպցը Մէհմէտ Նազիֆ պէյի, և ընդհանուր հասութից տնօրէն Սրագի էֆէնտիի.

Կրհաստատեն թէ օսմ. արժեթղթոց փոխանակման հրամարանին երեք է ն երեմական նախարարութեան թարգմանութեան գրասենեկի դիւանապետ Պետրոս էֆէնտի Քէրեստէճեան Լոնտոնի օսմանեան պատուիրակ կարգուեր է։ Իսկ Բարիզը պատուիրակը պիտի նշանակի օսմանեան կայսերական պանքայի Բարիզի ճիւղին կողմէ։

Աթէնքի Ա. յեղ լրագիրը կը ծանուցանէ թէ Յունաստանի պատերազմական նախկին նախարար Քարայիսքաքիս զօրավարն Ամէնքի օսմանեան գեսպան Թէվֆիգ պէյի այցելութիւնն ընդուներ է։ Թէվֆիգ պէյ առաջարկեր է ի հաշիւ Վեհ. Սուլթանին գնել այն զէնքերը՝ զոր յունական անկախութեան դիւցազնը՝ Քարայիսքաքիս՝ կը գործածէ եղեր յեղափոխութեան ժամանակ։

Ա.յեղ իւր յօդուածը կը վերջացնէ սա բառերով «փա՛ռք Սուլթանի՝ որ գիտէ քաջալերել իւր արիասիրտ թշնամիները։»

Թարիգէ կիմանամք թէ Տպագրական վերատեսչութիւնը տպագրական նոր օրէնքց ծրագիր մը մատուցած է ներքին գործոց նախարարութեան, որ 8 գլխէ և 34 յօդուածէ կը բաղկանայ, և յորում գրքերու համար նախ քան զողդրդութիւնն և դեռ տպագրութեան բլլալիք գործողութիւններն ալ տրամագրեալ են։ Այս ծրագրոյն քննութեան համար յանձնաժողով մը կազմուած է, որոյ անդամք են Սագզոզ Յովհաննէս էֆէնտի, Պոլսոյ քաղաքապետութեան ժողովոյ նախագահ Բամպի էֆէնտի, Բիւլտիէ վարժարանաց վերատեսուչ Սէլիմ էֆէնտի։ և լրագրական վերատեսուչ Մէհմէտ պէյ։

Երէկ և նախընթաց օրը Թուրքիոյ լրագիրներէ առնելով ծանօթութիւններ հրատարակեցինք մայրաքաղաքիս տարապարանաց վիճակին վրայ։ Հապա Թարիգի բացում տպարանաց առանց հրամանի բացուած լինելն հաստատուած է ասանց մէկ մասն տանց ու պարտիզաց մէջ կը գտնուին։ կան տպարաններ ալ, որ ալոց տիրանպարելին գներ են։ տարարանաց ոմանք ալ իրենց անհրամանաց գրքերուն վրայ՝ եթէ յուարէն են, «ԱՅԷՆՍ», իսկ եթէ գաղղիարէն՝ «ի Փարիզ» և այլ տեղ կը նշանակեն։

Պերլինի լրագիրը դոհութեամբ կը հրատարակէ Օգոստ. Սուլթանի կողմէ մարաքաղաքիս գերմանական դեսպանին ու դեսպանուհոյն եղած կայսերական մեծարանքն ու յաճախակի ընդունելութիւններն, ծանուցանելով թէ Գերմանիոյ կայսրը մեծապէս գոհ և շնորհակալ կը լինի, և երկու տերութեանց մէջ բարեկամական անկեղծ յարաբերութիւնք առաւել ևս կամրանդին այսպէս։

Աղեքսանդրիոյ լրագիրը կը ծանուցանէ թէ Վեհ. Սուլթանին գահակալութեան տարեդարձի օրը Եգիպտոսի մէջ յատուկ Մասնաժողով մը կազմուած և մշեալ փոան վերաշինութեան արտօնութիւն տրուած է։ Ցիշեալ յանձնաժողովն միանգամայն պաշտօն ունի Ազգ. Պատրիարքարանի կողմանէ իրեն յանձնուած ժողովրդական հրամանաց ապարդիւնք հանդանակութիւն ընելու և սոյն կարեւոր գործն ի գլուխ ածելու։

«Արդ կը խնդրեմք մեր Պատուարժան և բարեսէր ազգայիններէն որ ի ներկայանալն Ցանձնաժողովոյ Մեծ. անդամոց, շնորհ ընեն չպակաղ իրենց յօժարակամ նուէրն ու օգնութիւնը, որով սոյն կարեւոր և դժուարին ձեռնարկն ի գլուխ ասանելով երկսեռ վարժարանաց ազգաթիվ ուսանողաց ներկայ և ապագայ բարւոք դասատուութիւնն ապահովի։

Ի դիմաց Թաղ. խորհ. Փոխ–քարտ.

Ամենապիր Ամենապետ

Դ. Մկրտչեան Ն. Ֆրէնչեան

1884 Օգոստ. 27

Փոխ–քարտ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իտալիոյ երկրորդ ասպետն տարեցու՝ Էվգաֆի ընդհանուր հաստատիչ անօրէն Իսմայիլ Հաղգը էֆէնտի.

Մի-թէ մարդի ասպիսն տարեցու՝ Ֆիտուէի օսմանեան հիւպատոս Տիմիթրաքի Մավրոկէնի էֆէնտի.

Վիէննայի օսմանեան գեսպանատան առաջին քարտուղար Նարի պէյ՝ այն գեսպանութեան խորհրդական կարգեցաւ.

Երկրորդ ասպետն Մէճիտիէ պատուանշան՝ Էվգաֆի վարչական ժողովոյ նախագահ Ալի Բիզա, և զինուորական գործարանաց վերակացու Ապուլլահ էֆէնտիներու.

Երրորդ ասպետն Օսմանիէ՝ Էվգաֆի ընդհանուր համարակալութեան տնօրէն Ճանիպ պէյի.

Երրորդ ասպետն Մէճիտիէ՝ յիշեալ պաշտօնատան Մէրթուպցը Մէհմէտ Նազիֆ պէյի, և ընդհանուր հասութից տնօրէն Սրագի էֆէնտիի.

Կրհաստատեն թէ օսմ. արժեթղթոց փոխանակման հրամարանին երեք է ն երեմական նախարարութեան թարգմանութեան գրասենեկի դիւանապետ Պետրոս էֆէնտի Քէրեստէճեան Լոնտոնի օսմանեան պատուիրակ կարգուեր է։ Իսկ Բարիզը պատուիրակը պիտի նշանակի օսմանեան կայսերական պանքայի Բարիզի ճիւղին կողմէ։

Աթէնքի Ա. յեղ լրագիրը կը ծանուցանէ թէ Յունաստանի պատերազմական նախկին նախարար Քարայիսքաքիս զօրավարն Ամէնքի օսմանեան գեսպան Թէվֆիգ պէյի այցելութիւնն ընդուներ է։ Թէվֆիգ պէյ առաջարկեր է ի հաշիւ Վեհ. Սուլթանին գնել այն զէնքերը՝ զոր յունական անկախութեան դիւցազնը՝ Քարայիսքաքիս՝ կը գործածէ եղեր յեղափոխութեան ժամանակ։

Ա.յեղ իւր յօդուածը կը վերջացնէ սա բառերով «փա՛ռք Սուլթանի՝ որ գիտէ քաջալերել իւր արիասիրտ թշնամիները։»

Թարիգէ կիմանամք թէ Տպագրական վերատեսչութիւնը տպագրական նոր օրէնքց ծրագիր մը մատուցած է ներքին գործոց նախարարութեան, որ 8 գլխէ և 34 յօդուածէ կը բաղկանայ, և յորում գրքերու համար նախ քան զողդրդութիւնն և դեռ տպագրութեան բլլալիք գործողութիւններն ալ տրամագրեալ են։ Այս ծրագրոյն քննութեան համար յանձնաժողով մը կազմուած է, որոյ անդամք են Սագզոզ Յովհաննէս էֆէնտի, Պոլսոյ քաղաքապետութեան ժողովոյ նախագահ Բամպի էֆէնտի, Բիւլտիէ վարժարանաց վերատեսուչ Սէլիմ էֆէնտի։ և լրագրական վերատեսուչ Մէհմէտ պէյ։

Երէկ և նախընթաց օրը Թուրքիոյ լրագիրներէ առնելով ծանօթութիւններ հրատարակեցինք մայրաքաղաքիս տարապարանաց վիճակին վրայ։ Հապա Թարիգի բացում տպարանաց առանց հրամանի բացուած լինելն հաստատուած է ասանց մէկ մասն տանց ու պարտիզաց մէջ կը գտնուին։ կան տպարաններ ալ, որ ալոց տիրանպարելի

եղնէ. անոնցմէ մին գացեր է ոստիկանութեան իմացնել եղելութիւնը, և ուրիշ մ'ալ ապտակ մ'ի ջուցեր է Տոքթ. Սիօթիսի։ Երբ վերջապէս Տոքթ. Սաբէլ և իւր ընկերները կրցեր են տունէն դուրս ելնել, Եէսիր-գուէլի պահականոցը նախնական հարցաքննութեան մ'ենթարկուեր են։ Այնուհետեւ, հարցաքննութիւնը կատարող պաշտօնեայն ուզեր է երկու բժիշկներն ոստիկանութեան պաշտօնատունը առաջնորդել, բայց Տոքթ. Սաբէլի բողոքանաց և տուած երաշխաւորութեան վրայ արձակուեր են։

Երկուշաբթի առաւօտ, ոստիկանութեան բժիշկ Տոքթ. Պէքիր էֆէնտի և կայսերական բժշկական գայրցին դատաւոր Խայրի պէյ և Միւհրի պէյ, Սամաթիայ ոստիկանապետին հետ Եէսի գուէլ, Խաշիին տունը դացեր, գիակը քներ և Խաշիի ընտանեաց յայտարարութիւնները լսեր են։ Ապա ըսեր են որ մարմինը պէտք է բժշկական գայրցը փոխադրել զննութեան համար։ Ընտանեաց կրնէ այդ գործողութեան հաւանութիւն տուող թուղթ մը ստորագրուելէ յետոյ, մարմինը պատգարակով փոխադրուեր է։ Բժիշկները սրուակի մը մէջ գրեր են ուռոյցին կտրուած մասը, և փոքրիկ արկղի մը մէջ՝ սպունգներն և այլ երկրորդական նիւթերն, որք գործողութեան ատեն գործածուած էին և ամենքը կնքելով բժշկական վարժարանը տարեր են։

Ըստ նոր տեղեկութեանց, զննութենէն յետոյ, մարմինը երէկ ընտանեացն յանձնուեր է, եւ կ'ըսուի թէ բժիշկք տեղեկագրեր են թէ Խաշիի արդէն սրտի հիւանդութեան ենթակայ լինելուն պատճառաւ չէ կրցեր դիմանալ վիրահատութեան, եւ թաղկացումն (ՀԷՒՏՔ) գալով վրան՝ մեռեր է։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

(Այս օրուան)

ԱՃԱՌՆՍ ՀԱՎԱՍ

ՁՈՐՆ Ի ՈՒՈՆԻԱ

Վարշաւիա, 9 սեպտ.

Ռուսիոյ կայսրն ու կայսրուհին երեկ իրիկուն ասա հասան։ —

ԳԵՐՄԱՆԱՅԻՔ ՅԱՔՈՒԹԻՒՆ

Պերլին, 8 սեպտ.

Գերմանական արտասովոր Գօսիսէր սոքթոր Նեթթիկը, յանուն Գերմանիոյ նոր կէսար դրաւեց Ամիրիկէի հարաւային ափերամերձ երեքաց վրայ։

ՖՈՒԼԵՐԱՆ Ի ՖՐԱՆՍԱ

Մարսիլիա, 9 սեպտեմ. եր.

Այսօր 3 հոգի մեռան քոլերայէն։

Թուլոն, 9 սեպտ. եր.

Այսօր 2 հոգի մեռան քոլերայէն։

ՖՈՒԼԵՐԱՆ Յ'ԻՏԱԼԻԱ

Նաբօլի, 8 սեպտ.

Ուսիպէրթիոյ թագաւորն այսօր կէս օրէն յետոյ ասա հասաւ հիւանդանոցները և քոլերայէ վարակեալ թաղերն այցելելու։

Հռոմ, 9 սեպտ. եր.

Այսօր 240 հոգի մեռան քոլերայէ ի Նաբօլի. —զանազան տեղեր, 260 հոգի։

ՖՈՒԼԵՐԱՆ Յ'ՍՊԱՆԻԱ

Մադրիտ, 9 սեպտ. եր.

Այսօր 3 հոգի մեռան քոլերայէն Յանիանթէ և չրջակայքը։

ԴՐԱՄԱԿԱՆ

ԴԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Դալաթիա, 29 Օգոստոս

ԸՆԹԱՅԻՐ ՓՈԽԱՆԱԿԱԿԴՐՈՅ

3 ամիս Լիմարայի վրայ (պանքայի)	.....	110 1/8
3 » » » (վճռագիր)	.....	109 3/4
3 » Բարիզի » (պանքայի)	.....	22 95
3 » » » (վճռագիր)	.....	23 02 1/2

ԸՆԹԱՅԻՐ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Բանքայիսի

Երէկ կրեկոյ գոցուեցաւ	դհկ.	9
Պօղոսակի գոցուելէն վերջը	»	8 39
Այսօր Բերսայի մէջ	»	
Առաւօտուն բացուեցաւ	»	8 38 1/4
Բարձրագոյն գին	»	8 38 1/2
Նուազագոյն	»	8 38
Կէս օրին	»	8 38
Լիմիթիսի Եգիպտական	»	66 15
Երէկ իրիկուն գոցուեցաւ	»	66 12 1/2
Բերսայի մէջ		
Այս առաւօտ բացուեցաւ	»	66 10
Կէս օրին	»	66 15
Բէքօր գոնսոլիտէ		
» Լիմիթէի	»	25
Հէվալէսիբ	»	
Փոխառութիւն 1863	ֆր.	62
» 1865	»	52
» 1869	»	46
» 1873	»	41
Պոն տու Թրէզոր	Անգլ. Լ.	48 50
Բուժէլի երկաթուղի	ֆր.	43 75
Օպիկապսի տը Բրիորիթէ	»	373
Բանքնոթաղթ Լաւրիսմի	»	81

ԲԱՆԿՆԵՏՈՒԹԻՒՆ

Սապիթէթ ֆէնէրալ	Անգլ. Լ.	3 28
Քրէտիթ ֆէնէրալ (Գ. Ի.)	Օսմ. Լ.	6 25
Պանք տը Գանս	»	5 30
Սօս. Շանէ է վայէօր	Օսմ. Լ.	3 28
Թրամուէյ	»	292 1/2

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	դրշ.	100
20 ֆրանգնոց	»	87 26
Անգլիական ոսկի	»	110 8
Բօլ իմիջերիալ	»	90 3
Քրիմիզ	»	51 15
Ռուսլիթղթադրամ	»	8 95
» արծաթի	»	89 30
Ֆիորին	»	9 1
Մէճ. արծ. (տարբ.)	»	108 1
Վէցնոց	»	102 30
Հինգնոց	»	102 30
Մէճիտիէ	»	98
Պրինճ	»	800
Թղթադրամ	»	3000

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 9 Սեպտեմբեր ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսոլի-է գոցուեցաւ		101 5/16
Օսմ. » » գոցուեցաւ		8 1/4
» » գոցուեցաւ		8 1/8
Օսմ. փոխառութիւն 1865		10 1/2
» » 1869		9 3/8
» » 1871		66
» » 1872		48
» » 1873		8 1/4
փոխառութիւն 1877		78
Պանք Օթոման		13
Լուսական փոխառ. 73 (գ. կ.)		92 5/8
Եգիպտական մտացեալ (իւնիֆիէ)		59 5/8
» ասանձն. (բրիվիլէժիէ)		82 3/8
Տպրա Պանիէ		58 1/4
Տօսմանիալ (փոխառ. Լօչիլա)		80 1/2
Հունգարական պարտաթուղթ 1877		102
Փոխանակութիւն Բարիզի վրայ		25 362

Վիեննա, 9 Սեպտեմբեր ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ		121 80
Օսմանեան երկաթուղի		20 80

Բարիզ, 9 Սեպտ. ժամ 3 վայր. 65 երեկոյ

Լբանական Լանիթ 4 1/2 0/0	բաց	108 47 1/2
» » 3 0/0	բաց	78 95
Օսմանեան ֆօնսոլիտէ բանուեցաւ		8 30
» » գոցու. (գ. կ.)		8 27 1/2
Օսմանեան փոխառութիւն 1863		—
» » 1865		—
» » 1869		46
» » 1873		41
Օսմանեան երկաթուղի		44
» Իէմիի բանեթեանղթաք		517 50
Պանք Օթոման		576 25
Դրէտի Լիոնէ		562 50
» Ֆոնսիէ		1312 50
Բանեթեատու Լիոնի (գուբ. կոր.)		1242 50
Սուէզի ջրանցք		1943 75
Լուսական 5 0/0 1877ի		98
Իտալական Լանիթ (բարձրացած)		96
Արեւելեան Լուս. (Լիս Օրիան.)		—
Եգիպտական մտացեալ գոց		300
Սպանիական (արտաքին)		60 1/8
Բրիորիթէ Թիւրք		380
5 0/0 Հէլլենական		359 37 1/2
Զէք Լոնդրայի վրայ		25 19

«ՎԱՐԺԱՐԱՆ» ԱՄՍԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

«Քանի որ մեր պարբերական գրականութիւնը անապահով դրութեան մէջ է նիւթական կողմէ, գուցէ շատերին օտարոտի երեւի մեր վստահութիւնը մի այսպիսի մասնագիտական թերթի հրատարակութեան ձեռնամուխ լինելու, մանաւանդ որ «Դատարակը» Թէյոն ոսիայում, «Պարոյը» Էջմիածնում և «Մանկավարժական թերթը» Թիֆլիսում յաջողութիւն չունեցան և կարճ ժամանակից յետոյ դադարեցան։ Այդ կէտից նայելով, արդարև մեծ է մեր վստահութիւնը, բայց մենք նիւթական օգուտ չենք սպասում «Վարժարանից»։ մեր ցանկութիւնն է լրացնել հայ ուսումնարանի պահանջը, ունենալ մի օրգան, որ՝ նախաձախդիր լինելով նորա շահերին, նպաստէ հայ ուսումնարանի, հայ ուսուցչի և հայ ուսանողի դրութեան բարւոքմանը։ Այս նպատակին մենք յուսով ենք հասնել օժանդակութեամբ մեր մանկավարժական ասպարիզում գործող յայտնի անձանց, որոնք խոստացել են իւրեանց գործակցութիւնը «Վարժարանին»։

Այս խօսքերովն էր սկսում «Վարժարանը» իւր գոյութեան առաջին տարեշրջանը։ Նա գիտէր, որ իրան նախորդները, Դատարակը, Դպրոցը, Մանկավարժական թերթը ծնան և մեռան ամենակարճ ժամանակում. ծնան և մեռան առանց իրանց գոյութեան հետքը թողնելու, առանց իրանց յաջորդի համար հող պատրաստելու. նա գիտէր, որ թերը ոչ միայն նիւթական օգուտ չէ ունենալու, ոչ միայն իւր ջանքերը գրամով չեն վարձատրուելու, այլ և տարպուած պէտք է լինի անձամբ հաթել իւր ճանապարհը հայկական մասնաւոր ամբաստանի փչոտ և տատասկոտ անապատի միջով։ Այս ամենը նախատեսած՝ թերթը դարձեալ հրապարակ է իջնում, նշանակում է նա ոչ միայն վստահ է իւր ուժերի, իւր աշխատակիցների վերայ, այլ հաւատ ունի թէ ընթերցողների մի բաւարար դասակարգ պէտք է գտնէ իւր մտքերն ընդունելու պատրաստ։ Այսպիսով իւր բարոյական կարողութեան վերայ վստահ, «Վարժարանը» բացարձակապէս պարզում է ընթերցողների առաջ իւր ապագայ նպատակները։

«Թէ մեր պարբերական հրատարակութիւնները չեն զլացել իւրեանց էջերը մանկավարժական յօդուածների համար և մենք դրեթէ ամեն օր կարդում ենք թղթակցութիւններ այս կամ այն ուսումնարանի գրութեան և նորա մէջ գործող անձանց գործունէութեան մասին, բայց մեր կարծիքով դրա չեն լրացնում հայ ուսումնարանի պահանջը. շատ անգամ էլ անձնական հաշիւների և կուսակցութեանց ներկայացուցիչների գրչի ծնունդ լինելով, փոխանակ գործին նպաստելու, խանգարում են գործը։ Մեզ բաւական չէ իմանալ որ մի հոգ. պարձու, մի տեսուչ, մի ուսուցիչ կամ վարժուհի այս կամ այն պակասութիւնն ունեն. այլ մեզ հարկաւոր է միջոցներ ցոյց տալ այդ թերութեանց առաջն առնելու համար։ Մեզ բաւական չէ պարծանքի նամակներ, այլ հարկաւոր է ինչպէս որ ասել դրամատիրոջ բաշխուցիչներ։ բաւական չէ յայտնել, այլ պէտք է ինքնագրել։

«Վարժարանին» նպատակն է հեռու պահելով իւրեան անձնական յարձակմունքներից և կուսակցական հաշիւներից, ինքնաբերան տալ հայ ուսուցչաբանէ ներկայ դրութեան համապատասխան դիտողութիւններ։

Ամեն կողմից տեսնում ենք, որ հայն ուսում և կրթութիւն է ցանկանում, բայց այդ ցանկութիւնը չատ տեղերում դեկավարների պակասութեան պատճառով մնում է անկատար և մեր ազգի առաջ դնալու այդ միակ ճանապարհը չէ հարթվում։ «Վարժարանին» նպատակն է նպաստել հարթելու ազգային կրթութեան փչից ուղին, առաջնորդելով ժողովրդեան մէջ գործելու փոխանակ ունեցող անձանց և միջոցներ ցոյց տալով նոցա ժողովրդեան պահանջին բաւականութիւն տալու։

